

**«ՍՄԱՐԹ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ**

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

29.06.2026

N 012624



ԱՆԿԱՆ ԱՌԻԴՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սմարթ Կրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ
Մասնակիցներին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Սմարթ Կրեդիտ» ՈՒՎԿ ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԻ կանոնագրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերության ղադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր
Շ. Թաչխյան

29.06.2026թ.

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

		<i>(հազար դրամ)</i>	
	Ծանոթագրություն	2025թ.	2024թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	4	295,207	238,050
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	4	(81,707)	(62,650)
Զուտ տոկոսային եկամուտ		213,500	175,400
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5	155,596	133,335
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		(357)	(376)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		155,239	132,959
Արտարժույթային գործարքներից ստացված գուտ օգուտ/(վնաս)		(557)	8,331
Այլ գործառնական եկամուտ	6	19,717	17,775
Գործառնական եկամուտ		387,899	334,465
Վարկերից և այլ փոխատվություններից վնաս		(50,366)	16,606
Անձնակազմի գծով ծախսեր	7	(102,565)	(88,890)
Վարչական ծախսեր	8	(55,496)	(53,294)
Այլ գործառնական ծախսեր		(51,058)	(40,214)
Գործառնական շահույթ		(259,485)	(165,792)
Շահույթ մինչև հարկվելը		128,414	168,673
Շահութահարկի գծով ծախս	9	(30,203)	(30,534)
Շահույթ հարկումից հետո		98,211	138,139
Այլ համապարփակ արդյունք		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		98,211	138,139

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծանոթագրություն	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	26,908	79,963
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	10	114,703	119,285
Հաճախորդներին տրված վարկեր	11	1,756,259	1,538,857
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	12	15,928	18,304
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	13	9,742	19,075
Այլ ակտիվներ	14	19,132	29,901
Ընդամենը ակտիվներ		1,942,672	1,805,385
Պարտավորություններ			
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր		490,138	159,521
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	15	191,887	400,089
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	16	13,906	21,606
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	1,792	15,627
Այլ պարտավորություններ	17	59,922	41,726
Ընդամենը պարտավորություններ		757,645	638,569
Կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	18	653,235	653,235
Լրացուցիչ կապիտալ		160,000	160,000
Կուտակված շահույթ		371,792	353,581
Ընդամենը սեփական կապիտալ		1,185,027	1,166,816
Ընդամենը պարտավորություններ և կապիտալ		1,942,672	1,805,385

Գործադիր տնօրեն
Նշան Մելիքսեթյան

29.06.2026թ.



Գլխավոր հաշվապահ
Անահիտ Մնացականյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

	<i>(հազար դրամ)</i>			
	Բաժնետիրակ ան կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 31.12.2023թ.	214,000	66,293	215,443	495,736
Տարվա շահույթ	-	-	138,139	138,139
Ընդամենը տարվա շահույթ	-	-	138,139	138,139
Կապիտալի համալրում	439,235	-	-	439,235
Ստորադաս փոխառություն	-	93,707	-	93,707
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	93,707	-	93,707
Մնացորդը առ 31.12.2024թ.	653,235	160,000	353,581	1,166,816
Տարվա շահույթ	-	-	98,211	98,211
Ընդամենը տարվա շահույթ	-	-	98,211	98,211
Շահաբաժնի վճարում	-	-	(80,000)	(80,000)
Ստորադաս փոխառություն	-	-	-	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	-	-	-
Մնացորդը առ 31.12.2025թ.	653,235	160,000	371,792	1,185,027

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար**

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված տոկոսներ	304,260	245,166
Վճարված կոմիսիոն գումարներ	(49,072)	(59,257)
Կորուստների վերականգնում		-
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	109,799	114,384
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(55,840)	(68,716)
Վճարված հարկեր	(63,071)	(34,792)
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվներին պարտավորությունների փոփոխությունը	246,076	196,785
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)	(305,619)	(218,388)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(43,137)	(86,490)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	(102,680)	(108,093)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	19,357	(5,152)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	(8,400)	(26,673)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	10,957	(31,825)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժիններ	(80,000)	-
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	329,288	(305,587)
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	(205,880)	84,521
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	-	439,235
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	43,408	218,169
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(48,315)	78,251
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(4,740)	(908)
Դրամարկդում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	79,963	2,620
Դրամարկդում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	26,908	79,963

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեություն

«Սմարթ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է ՀՀ ԿԲ խորհրդի 24.12.2018թ. թիվ 217 Ա որոշմամբ, որպես ունիվերսալ վարկային կազմակերպություն գործելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում: Ընկերության կանոնադրությունը հաստատվել է Ընկերության միակ հիմնադիր «Ապրիլո» փակ ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդի կառավարիչ «Հայասա Ինվեսթմենթ» ՍՊ ընկերության 2018 թվականի 07 նոյեմբերի թիվ 1 որոշմամբ և գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում ՀՀ ԿԲ նախագահի 24.12.2018թ. թիվ 217 Ա որոշմամբ: Համաձայն 24.12.2018թ. ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրված Վարկային կազմակերպության թիվ 48 լիցենզիայի Ընկերությունը կարող է իրականացնել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված վարկային կազմակերպության գործունեություն և ֆինանսական գործառնությունների ՀՀ դրամով և արտարժույթով: Վարկային կազմակերպության հիմնական գործունեությունը վարկեի տրամադրումն է ֆիզիկական և իրավաբանական անձանց:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ ք. Երևան, Հրաչյա Քոչար փողոց 27 շենք, 55 ոչ բնակելի տարածք:

2025թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ՀՀ-ում ունի 1 գրասենյակ (2024թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1):

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա տվյալներով կազմել է 9 մարդ (2024թ.՝ 11 մարդ):

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՄ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՄ-ներ) պահանջներին համապատասխան:

Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- *ՖՀՄՄ7 «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» - Բացահայտումներ*

- *ՖՀՄՍՍ «Ֆինանսական գործիքներ» - Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի ֆՀՄՍՍ «Ֆինանսական գործիքներ» - Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում*
- *ՖՀՄՍՍ «Ֆինանսական գործիքներ» - էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում ֆՀՄՍՍ «Ֆինանսական գործիքներ» - Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների - հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ ֆՀՄՍՍ 18 «Ֆինանսական հաշվետվություններում ներկայացումը և բացահայտումը», Փոփոխություններ ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական հոսքերի մասին» հաշվապահական ստանդարտում*

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտները ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի համախառն գումարի նկատմամբ բացառությամբ ձեռքբերման դրությամբ արժեզրկված կամ ակտիվի գործողության ընթացքում վարկային ռիսկի էական վատթարացման հետևանքով արժեզրկված ակտիվների, որոնց դեպքում արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը կիրառվում է ակտիվի ամորտիզացված արժեքի հիման վրա:

Տոկոսային ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի և ծախսի բաշխման մեթոդն է: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները զեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը:

Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Արտարժույթային գործարքներ

Ընկերության գործառնական արժույթից տարբեր արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները արտացոլվում են հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերաչափումից գոյացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակներում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեության կառավարման և ղեկավարությանը տեղեկատվության տրամադրման եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը, նպատակները և այդ քաղաքականության կիրառումը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարությունն ուղղված է պամանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացմանը, ֆինանսական ակտիվների որոշակի կառուցվածքի պահպանմանը, ֆինանսական ակտիվների գործողության ժամկետների համապատասխանեցմանն այն պարտավորությունների գործողության ժամկետներին, որոնք ֆինանսավորում են այդ ակտիվները, կամ դրամական միջոցների հոսքերի իրացմանն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի եկամտաբերությունը ,

- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելի շրջանակներում պահվող ֆինանսական ակտիվների) արդյունավետության վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- նախորդ ժամանակաշրջանների վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, վաճառքների պատճառները և ապագա վաճառքների ակնկալիքները:

Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեքը սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» սահմանվում է որպես փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և վարկավորման հետ կապված այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի), ինչպես նաև որպես շահույթի մարժայի հատուցում:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այստեղ ներառվում է այն գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է փոխել պայմանագրային դրամական միջոցների ժամկետը կամ գումարը:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝
ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԲԱՇԿՎ),
բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԲԱԱՀՖԱ),
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:
Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԲԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև):

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԲԱԱՀՖԱ)

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԲԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով,
և

- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) «ամորտիզացված արժեքով չափվող»,

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերության հիմնական ֆինանսական ակտիվները դասակարգված են որպես «Ամորտիզացված արժեքով չափվող»: Ստորև ներկայացնում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականությունն այդ դասի համար:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Այս ակտիվները հիմնականում ներառում են այն ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով (օրինակ հաճախորդներին տրված վարկեր), իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից գուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, եւ հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցրած արժեքի մասնաբաժնի համամասնորեն:

Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են բանկերում տեղաբաշխված միջոցները, դրամական միջոցները և դրանց համարժեքները և հաճախորդներին տրված վարկերը: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում:

Արժեքիում

Պարտքային գործիք հանդիսացող և որպես ԻԱՇԿՎ չափվող չդասակարգված ֆինանսական ակտիվները ենթակա են արժեքիկվածության ստուգման՝ ակնկալվող պարտքային կորուստների մոդելով: Ակնկալվող պարտքային կորուստի մոդելի համաձայն՝ պետք է ճանաչվի պարտքային կորուստի գծով պահուստ՝ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափով: Սակայն, եթե գործիքի պարտքային ռիսկը դրա սկզբնական ճանաչումից ի վեր նշանակալիորեն աճել է, ապա պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի ընթացքում ԱՊԿ չափով:

12 ամսվա ընթացքում սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է սպասվող պարտքային վնասի այն մասը, որն առաջանում է ֆինանսական գործիքի գծով պարտականությունների չկատարման այն դեպքերի արդյունքում, որոնք հնարավոր են հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում:

Սպասվող պարտքային վնասի չափում

Սպասվող պարտքային վնասն իրենից ներկայացնում է ըստ պարտականությունների չկատարման հավանականության աստիճանի կշռված պարտքային վնասի գնահատականը և չափվում է հետևյալ կերպ.

- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեքիկված չեն հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես բոլոր պակասող դրամական միջոցների ներկա արժեք (այսինքն՝ տարբերությունն այն դրամական միջոցների հոսքերի միջև, որոնք Ընկերությունը պետք է ստանա պայմանագրի համաձայն և որոնք Ընկերությունն ակնկալում է ստանալ),
- ֆինանսական ակտիվներ, որոնք արժեքիկված են հաշվետու ամսաթվի դրությամբ. որպես համախառն հաշվեկշռային արժեքի և ապագա գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի տարբերություն,

Արժեքիկված լինելու վկայությունը ներառում է հետևյալ դիտարկելի տվյալները.

- վարկառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարությունները,
- պայմանագրի խախտումը, մասնավորապես պարտականությունների չկատարումը կամ վճարման ուշացումը,
- վարկի պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ պայմաններում չէր դիտարկի,
- վարկառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը:

Վարկը, որի պայմանները վերանայվել են վարկառուի վիճակի վատթարացման պատճառով, սովորաբար համարվում է արժեզրկված, եթե գոյություն չունի վկայություն, որ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը չստանալու ռիսկն էականորեն նվազել է և չկան արժեզրկման այլ հայտանիշներ: Բացի այդ, արժեզրկված է համարվում 90 կամ ավելի օր ժամկետանց վարկը:

Սպավող պարտքային վնասի գծով պահուստի ներկայացումը ֆինանսական հաշվետվությունում

Սպավող պարտքային վնասի գծով պահուստը ամորտիզացված արժեքով չափվող ակտիվների համար նվազեցվում է ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է գուտ հիմունքով:

Վարկերի դուրսգրում

Վարկերը և պարտքային արժեթղթերը դուրս են գրվում (ամբողջությամբ կամ մասնակիորեն), երբ գոյություն չունի դրանք հետ ստանալու իրատեսական հեռանկար: Դուրսգրումը սովորաբար իրականացվում է այն դեպքում, երբ Ընկերությունը որոշում է, որ վարկառուն չունի այնպիսի ակտիվներ կամ եկամտի աղբյուրներ, որոնցից կարող է ստանալ դուրսգրման ենթակա գումարները մարելու համար բավարար դրամական միջոցների հոսքեր:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն ժամանակաշրջանից հետո, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը: Ընկերությունը պետք է վերադասակարգի ֆինանսական ակտիվները, եթե փոխում է այդ ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը: Ակնկալվում է, որ նման փոփոխությունները չափազանց հազվադեպ կլինեն: Այս փոփոխությունները որոշվում են Ընկերության վերադաս դեկավարության կողմից՝ արտաքին կամ ներքին փոփոխությունների արդյունքում և պետք է նշանակալի լինեն Ընկերության գործունեության համար և տեսանելի արտաքին կողմերի համար:

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը.

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմած գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:

Բանկերից և այլ փոխատուներից ստացված փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հետագայում նման տոկոսակիր պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, համաձայն որի՝ պարտավորության մարման

Ժամանակաշրջանի ամբողջ ընթացքում տոկոսային ծախսերի հաշվարկը կատարվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված պարտավորության մնացորդի նկատմամբ հաստատուն դրույքի կիրառմամբ: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության պայմաններից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են գործարքի հետ կապված սկզբնական ծախսերը, մարման ժամանակ վճարվելիք այլ հավելյալ վճարներ, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները:

Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու՝ Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ, բացառությամբ, եթե դրանք առաջանում են.

- գույքի սկզբնական ճանաչումից,
- ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքի արդյունքում ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից և գործարքի ամսաթվի դրությամբ չեն ազդում ոչ հարկվող շահույթի, և ոչ էլ հաշվապահական շահույթի վրա,
- դուստր կազմակերպություններում և համատեղ վերահսկվող կազմակերպություններում ներդրումներից, որի դեպքում Ընկերությունն ի վիճակի է վերահսկել տարբերությունների հակադարձումը, և հավանական է, որ տարբերությունները չեն հակադարձվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական չէ, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն և անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ Ընկերության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

4. Զուտ տոկոսային եկամուտ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Տոկոսային եկամուտ		
Հաճախորդներին տրված վարկեր	291,319	233,988
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	3,888	4,062
	295,207	238,050
Տոկոսային ծախս		
Ներգրավված վարկեր և փոխառություններ	(80,072)	(60,063)
Վարձակալության գծով պարտավորություն	(1,635)	(2,587)
	(81,707)	(62,650)
Զուտ տոկոսային եկամուտ	213,500	175,400

5. Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
Այլ միջնորդավճարներ	155,596	133,335
	155,596	133,335

6. Այլ գործառնական եկամուտ

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Եկամուտներ ստացված տույժերից, տուգանքներից	12,679	16,278
Վաճառքի համար պահվող գույքի օտարումից ստացված եկամուտներ	4,752	-
Այլ	2,286	1,497
	19,717	17,775

7. Անձնակազմի գծով ծախսեր

	2025թ.	(հազար դրամ) 2024թ.
Փոխհատուցումներ աշխատակիցների	(87,857)	(79,817)
Արձակուրդի պահուստ	(14,403)	(8,413)
Անձնակազմի այլ ծախսեր	(305)	(660)
	(102,565)	(88,890)

8. Վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(13,669)	(13,160)
Զփոխհատուցվող հարկեր և տուրքեր	(19,845)	(14,184)
Ծրագրի սպասարկման ծախսեր	(5,903)	(1,435)
Այլ ծախսեր	(16,079)	(24,515)
	(55,496)	(53,294)

9. Շահութահարկի գծով ծախս

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկի գծով ծախս	44,038	28,368
Հետաձգված հարկի գծով ծախս	(13,835)	2,166
	30,203	30,534

Տարվա փաստացի հարկային ծախսերի և Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի սահմանված դրույքի միջև տարբերության պատճառները ներկայացված են ստորև.

Շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

	2025թ.	Արդյունավե տ դրույքաչափ (%)	2024թ.	Արդյունավե տ դրույքաչափ (%)
Շահույթը/(վնասը) մինչև հարկումը	128,414		168,673	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով	23,115	18%	30,361	18%
Չհարկվող եկամուտներ/ ծախս	7,088	6%	173	-
Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	30,203	24%	30,534	18%

Հետաձգված հարկային ակտիվների, շահույթում կամ վնասում ճանաչված գումարների և ՖՀՄՍ 9-ի ճշգրտման ազդեցության մանրամասները ներկայացված են ստորև.

	<i>(հազար դրամ)</i>			
	31.12.24	Շահույթ կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31.12.25
Այլ պարտավորություններ	653	(653)	-	-
Ֆինանսական վարձակալություն	455	295	-	750
Վարկերի գծով	(16,735)	14,193	-	(2,542)
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(15,627)	13,835	-	(1,792)

	<i>(հազար դրամ)</i>			
	31.12.23	Շահույթ կամ վնասում ճանաչված	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31.12.24
Այլ պարտավորություններ	1,670	(1,017)	-	653
Ֆինանսական վարձակալություն	149	306	-	455
Վարկերի գծով	(15,280)	(1,455)	-	(16,735)
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(13,461)	(2,166)	-	(15,627)

10. Դրամական միջոցներ և բանկերում տեղաբաշխված միջոցներ

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Կանխիկ դրամ դրամարկղում	19,229	4,030
Բանկային հաշիվներ	7,679	75,933

	26,908	79,963
Բանկերում տեղաբաշխված ժամկետային ավանդներ	114,703	119,285

11. Վարկեր հաճախորդներին

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Իրավաբանական անձանց տրված վարկեր	274,580	167,937
Անհատներին տրված վարկեր	1,556,224	1,415,801
Վարկերի արժեզրկման պահուստ	(74,545)	(44,881)
Հաճախորդներին տրված գուտ վարկեր	1,756,259	1,538,857

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է վարկերի արժեզրկման պահուստի շարժը՝ ըստ դասերի 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	<i>(հազար դրամ)</i>		
	2025թ.		
	Իրավաբանական անձանց տրված վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	3,182	41,699	44,881
Զուտ (վերականգնում)/դուրս գրում	2,316	27,348	29,664
Վերջնական մնացորդ	5,498	69,047	74,545

	<i>(հազար դրամ)</i>		
	2024թ.		
	Իրավաբանական անձանց տրված վարկեր	Անհատներին տրված վարկեր	Ընդամենը
Մնացորդը տարեսկզբին	8,473	34,260	42,733
Զուտ (վերականգնում)/դուրս գրում	(5,291)	7,437	2,146
Վերջնական մնացորդ	3,182	41,698	44,879

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է տրամադրված վարկերի վերլուծություն՝ ըստ ճյուղերի 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Գյուղատնտեսություն	82,750	58,546
Առևտուր	199,818	186,805
Հիփոթեքային (բնակարանային) վարկեր	613,497	551,742
Ավտովարկեր	3,644	84,771
Առողջապահություն	358	1,349
Մպասարկում	12,425	44,873
Մպառողական	856,307	629,278
Այլ	62,005	26,374
	1,830,804	1,583,738
Արժեզրկման գծով պահուստ	(74,545)	(44,881)
	1,756,259	1,538,857

2025 և 2024թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված բոլոր վարկերը տրվել են Հայաստանի Հանրապետությունում գործող անհատներին և կազմակերպություններին, որը ցույց է տալիս, որ առկա է նշանակալի աշխարհագրական համակենտրոնացում մեկ շրջանում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է տեղեկատվություն հաճախորդներին տրված վարկերի պորտֆելի որակական ցուցանիշների վերաբերյալ 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համաձայն ՖՀՄՍ 9-ի:

	Փուլ 1			Փուլ 2			Փուլ 3			Ընդամենը վարկեր
	Համախառն	Պահուստ	Զուտ	Համախառն	Պահուստ	Զուտ	Համախառն	Պահուստ	Զուտ	
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ										
Վարկեր										
Իրավաբանական անձանց վարկեր										
0-ից 30 օր ժամկետանց	259,486	4,747	254,739	1,734	79	1,655	-	-	-	256,394
91 և ավել օր ժամկետանց	-	-	-	2,056	451	1,605	11,304	221	11,083	12,688
Անհատների տրված վարկեր										
0-ից 30 օր ժամկետանց	1,405,650	24,125	1,381,525	24,660	1,985	22,675	2,966	79	2,887	1,407,087
31-ից 90 օր ժամկետանց	-	-	-	10,948	8,215	2,733	15,197	256	14,941	17,674
91 և ավել օր ժամկետանց	-	-	-	-	-	-	96,803	34,387	62,416	62,416
Ընդամենը վարկեր	1,665,136	28,872	1,636,264	39,398	10,730	28,668	126,270	34,943	91,327	1,756,259

	Փուլ 1			Փուլ 2			Փուլ 3			Ընդամենը վարկեր
	Համախառն	Պահուստ	Զուտ	Համախառն	Պահուստ	Զուտ	Համախառն	Պահուստ	Զուտ	
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ										
Վարկեր										
Իրավաբանական անձանց վարկեր										
0-ից 30 օր ժամկետանց	159,679	3,032	156,647	-	-	-	-	-	-	156,642
91 և ավել օր ժամկետանց	-	-	-	8,258	150	8,108	-	-	-	8,108
Անհատների տրված վարկեր										
0-ից 30 օր ժամկետանց	1,263,441	23,231	1,240,210	7,447	678	7,769	881	268	613	1,247,592
31-ից 90 օր ժամկետանց	-	-	-	15,778	3,954	11,824	-	-	-	11,824
91 և ավել օր ժամկետանց	-	-	-	-	-	-	128,254	13,568	114,686	114,686
Ընդամենը վարկեր	1,423,120	26,263	1,396,857	31,483	4,782	26,701	129,135	13,836	115,299	1,538,857

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել անհատապես նշանակալի համարվող փոխառուներ:

12. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

	Համակարգ չային և այլ տեխնիկա	Գույք և գրասենյակ ային սարքավորո ւմներ	Այլ հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	22,601	7,801	2,421	5,620	2,873	41,316
Ավելացում	2,372	-	65	9,032	-	11,469
Օտարում	-	-	-	(10)	-	(10)
2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	24,973	7,801	2,486	14,642	2,873	52,775
Ավելացում	1,656	357	-	-	-	2,013
Օտարում	-	(176)	-	-	-	(176)
2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	26,629	7,982	2,486	14,642	2,873	54,612
<i>Կուտակված մաշվածություն</i>						
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	20,286	4,013	1,251	2,516	1,253	29,319
Տարվա ծախս	1,717	974	310	1,874	287	5,162
Օտարում	-	-	-	(10)	-	(10)
2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	22,003	4,987	1,561	4,380	1,540	34,471
Տարվա ծախս	1,122	992	310	1,595	288	4,307
Օտարում	-	(94)	-	-	-	(94)
2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	23,125	5,885	1,871	5,975	1,828	38,684
<i>Հաշվեկշիռային արժեք</i>						
2024թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2,970	2,814	925	10,262	1,333	18,304
2025թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	3,504	2,097	615	8,667	1,045	15,928

13. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների

	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ
<i>Սկզբնական արժեք</i>	
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	17,690
Ավելացում	28,000
Օտարում	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,690
Ավելացում	-
Օտարում	-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	45,690
<i>Կուտակված մաշվածություն</i>	
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	17,526
Տարվա ծախս	9,089
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,615
Տարվա ծախս	9,333
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	35,948
<i>Հաշվեկշիռային արժեք</i>	
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	19,075
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,742

14. Այլ ակտիվներ

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Դեբիտորական պարտքեր այլ անձանց նկատմամբ	10,182	1,981
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով	-	6,733
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	6,211	6,000
Այլ	4,586	312
Պահուստ	(1,847)	(2,197)
Հաճախորդներին տրված գուտ վարկեր	19,133	12,829

15. Դրամական շուկային ստացված այլ փոխառություններ

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Կապակցված կողմերից ստացված փոխառություններ	1,105	3,268
Երրորդ անձանցից ստացված փոխառություններ	190,782	396,821
Հաճախորդներին տրված գուտ վարկեր	191,887	400,089

16. Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Հունվարի 1-ի դրությամբ	21,606	138
Ավելացում	-	32,790
Տոկոսի կուտակում	1,633	(2,202)
Վճարումներ	(9,333)	(9,120)
Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ դեկտեմբերի 31-ի դրությամբ	13,906	21,606

2025թ. ՖՀՄՍ 16-ի համաձայն ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ կիրառված միջին կշռված տոկոսադրույքը կազմում է 10%:

17. Այլ պարտավորություններ և պահուստներ

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	4,329	3,741
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	39,586	30,735
Պարտավորություններ աշխատակիցների նկատմամբ	11,872	4,129
Այլ	4,135	3,121
	59,922	41,726

18. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 635,235 հազար ՀՀ դրամ, որը բաղկացած է 6,105 հատ բաժնեմասից, յուրաքանչյուրը 107,000 ՀՀ դրամ անվանական արժեքով: 2024թ. Ընկերության կանոնադրական կապիտալը համարվել է 439,235 հազար ՀՀ դրամ գումարով:

19. Պայմանական պարտավորություններ

Ընկերությունը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չի ունեցել կապիտալ ներդրումների գծով պարտավորություններ:

Ընկերությունը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որևէ կողմի պարտավորությունների համար երաշխավորություն չի տրամադրել:

Ընկերության հանդեպ հարուցված դատական հայցերը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ էական գումարային պահանջ չեն պարունակել:

20. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2025թ. դեկտեմբերի 31-ի և նույն ժամանակաշրջանում ավարտված տարվա ընթացքում Ընկերության և իր կապակցված կողմերի միջև իրականացված գործարքները և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները:

Տրված վարկեր

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Մնացորդը տարվա սկզբում	75,221	78,096
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	10,889	68,397
Տարվա ընթացքում մարված վարկեր	(65,652)	(81,321)
Հաշվեգրված տոկոսներ	6,339	11,702
Արտարժույթի վերագնահատման ազդեցությունը	(2,285)	(1,653)
Մնացորդը տարվա վերջում	24,511	75,221

(հազար դրամ)

Ստացված վարկեր և փոխառություններ

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Մնացորդը տարվա սկզբում	163,268	77,035
Տարվա ընթացքում ստացված վարկեր	-	160,000
Տարվա ընթացքում մարված վարկեր	(24,601)	(86,909)
Հաշվեգրված տոկոսներ	22,438	12,180
Արտարժույթի վերագնահատման ազդեցությունը	-	962
Մնացորդը տարվա վերջում	161,105	163,268

(հազար դրամ)

Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրությունը ներկայացված է ստորև: Կապակցված կողմերի հետ հաշվետու տարվա ընթացքում այլ գործարքներ չեն կատարվել:

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմը ներառում է այն անձանց, ովքեր իրավասու են և պատասխանատվություն են կրում Ընկերության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար:

Առանցքային կառավարչական անձնակազմի վարձատրության հետ կապված ծախսումները ներկայացվում են ստորև:

	<u>2025թ.</u>	<u>2024թ.</u>
Աշխատավարձ, այլ հատուցումներ	44,676	38,405

21. Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»):

• Մակարդակ 1: Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված);

• Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտարկելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից;

• Մակարդակ 3: Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների

վրա):

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

21.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ընկերությունը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տառաբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա				
	Նկարագրություն	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ և համարժեքներ	26,908	-	26,908	-	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	114,703	-	114,703	-	-
Հաճախորդներին տրված վարկեր	1,756,259	-	1,756,259	-	-
	1,897,870	-	1,897,870	-	-
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>					
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	490,138	-	490,138	-	-
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	191,887	-	191,887	-	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	13,906	-	13,906	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,329	-	4,329	-	-
	700,260	-	700,260	-	-

Հազար դրամ	Իրական արժեքի չափման հիերարխիա			
	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3
<i>Նկարագրություն</i>				
<i>Իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և համարժեքներ	79,963	-	79,963	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	119,285	-	119,285	-
Հաճախորդներին տրված վարկեր	1,538,857	-	1,538,857	-
	1,738,105	-	1,738,105	-
<i>Իրական արժեքով չափվող պարտավորություններ</i>				
Բանկերից ստացված փոխառություններ և վարկեր	159,521	-	159,521	-
Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	400,089	-	400,089	-
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	21,606	-	21,606	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	3,741	-	3,741	-
	584,957	-	584,957	-

22. Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկը հանդիսանում է ֆինանսական գործունեության անբաժանելի մասը, և գործառնական ռիսկերը գործունեության ծավալման անխուսափելի հետևանքն են: Այդ պատճառով Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության վիճակի վրա դրանց անցանկալի ազդեցությունները:

Ընկերությունը նպատակ ունի ախտորոշելու և վերլուծելու ռիսկերը, սահմանելու ռիսկի համապատասխան սահմանաչափերը և վերահսկումները, և վերահսկելու ռիսկերը և համապատասխանությունը սահմանաչափերին՝ օգտագործելով արժանահավատ և ժամանակակից տեղեկատվական համակարգերը:

Ռիսկի կառավարումը իրականացնում է Ընկերության ղեկավար անձնակազմը: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և հեջավորում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Ընկերության գործառնական միավորների հետ: Ռիսկի կարևորագույն տեսակներն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը և այլ գործառնական ռիսկերը: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը:

Պարտքային ռիսկ

Ընկերության պարտքային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է անհատական ռիսկերից, և ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային

արժեքին նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

Ստորև ներկայացված է պարտքային ռիսկին ֆինանսական ակտիվների ենթարկվածության առավելագույն չափը հաշվետու ամսաթվի դրությամբ:

	<i>(հազար դրամ)</i>	
	2025թ.	2024թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	26,908	79,963
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	114,703	119,285
Հաճախորդներին տրված վարկեր	1,756,259	1,538,857
	1,897,870	1,738,105

Վերոնշյալ հաշվեկշռային արժեքները լավագույն կերպով ներկայացնում են պարտքային ռիսկի առավելագույն չափը՝ հաշվի առնելով ձեռք բերված ապահովության միջոցները կամ անձնական երաշխավորությունները: Պարտքային ռիսկի ենթարկվածությունը կրճատելու նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր գուման ազդեցությունն էական չէ: Հաճախորդներին տրված վարկերի գծով հաճախորդներին տրված վարկերի վերլուծությունը և պարտքային ռիսկի համակենտրոնացումը հաճախորդներին տրված վարկերի գծով ներկայացված է ծանոթագրություն 10-ում:

Աշխարհագրական սեզմենտներ

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացված են ՀՀ-ում:

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և գսպողական քաղաքականություն

Ընկերությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեզմենտների կտրվածքով:

Պարտքային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Ընկերությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Պարտքային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավորության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

Գրավ

Ընկերությունը կիրառում է մի շարք կանոններ և միջոցներ՝ պարտքային ռիսկը մեղմելու նպատակով: Դրանցից ամենատարածվածը տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելն է, որը համընդհանուր գործելակերպ է: Ընկերությունը սահմանում է ուղեցույցներ՝ գրավի որոշակի տեսակների ընդունելի լինելու և պարտքային ռիսկի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների դիմաց հիմնական գրավների տեսակներն են.

Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ գրավի տեսակների.

	(հազար դրամ)	
	2025թ.	2024թ.
Անշարժ գույք	909,570	945,458
Փոխադրամիջոցներ	371,034	277,518
Երաշխավորություններ	219,008	107,893
Այլ գույքի գրավ	331,192	207,988
	1,830,804	1,538,857

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների իրական արժեքի կամ դրանից ստացված դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գծով գերակայող շուկայական տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել կամ հանգեցնել վնասների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխության դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	2025թ.		2024թ.	
	միջին արդյունավետ տոկոսադրույք		միջին արդյունավետ տոկոսադրույք	
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Տոկոսակիր ակտիվներ				
Հաճախորդներին տրված վարկեր	21.53%	14.92%	22.60%	17.35%
Տոկոսակիր պարտավորություններ				
Ներգրավված վարկեր և փոխառություններ	13.21%	7.15%	13.06%	7.00%

Արտարժույթային ռիսկ

Արտարժույթային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության առանձին կազմակերպությունների գործարքներն արտահայտված են վերջիններիս գործառնական արժույթից տարբեր արժույթով:

Ընկերության արտարժույթային ռիսկը հիմնականում առաջանում է ԱՄՆ դոլարով ստացված վարկերի հետ կապված փոխարժեքային փոփոխություններից, ինչի արդյունքում Ընկերությունը կարող է կրել

նշանակալի վնասներ: Այս ռիսկն, ըստ էության, Ընկերության կողմից չի կառավարվում՝ հաշվի առնելով դրա կառավարման հետ կապված ծախսերը և նման ռիսկերի կառավարման համար անհրաժեշտ գործիքակազմի բացակայությունը:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի առնվազն 45 օրվա ընթացքում կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Ընկերությունը նաև փորձում է նվազեցնել իրացվելիության ռիսկը՝ ներգրավելով հաստատուն տոկոսադրույքով փոխառություններ, վերջիններիս մասին ներկայացվել է «Տոկոսադրույքային ռիսկ» բաժնում:

Ընկերության իրացվելիության ռիսկի ապահովման նպատակով ցանկացած գործառնության համար Ընկերության կողմից նախատեսվում են համապատասխան միջոցներ, որոնց գումարը կախված է բյուջեից: Բյուջեն հաստատվում է Խորհրդի կողմից՝ այսպիսով հնարավոր դարձնելով դրամական միջոցների գծով Ընկերության կարիքների կանխատեսումը: Երբ գումարը գերազանցում է որոշակի սահմանաչափը, անհրաժեշտ է ստանալ նաև Խորհրդի հաստատումը:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չգեղջված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
2025թ.						
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>						
Վարկեր և փոխառություններ	-	421,680	-	59,000	358,288	480,680
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20,335	-	-	-	-	10,991
Կրեդիտորական պարտքեր	3,716	1,556	2,334	2,136	-	9,742
վարձակալության գծով	24,051	423,236	2,334	61,136	358,288	501,413
2024թ.						
<i>Ոչ ածանցյալ պարտավորություններ</i>						
Վարկեր և փոխառություններ	4,050	-	-	159,000	396,560	559,610
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10,991	-	-	-	-	10,991
Կրեդիտորական պարտքեր	3,716	1,556	2,334	4,667	9,333	21,606
վարձակալության գծով	18,757	1,556	2,334	163,667	405,893	592,207

23. Կապիտալի ռիսկի կառավարում

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն՝ ապահովելու Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքը՝ միևնույն ժամանակ առավելագույնի հասցնելով շահագրգիռ կողմերի հատույցը ներգրավված և սեփական միջոցների մնացորդների օպտիմալացման ճանապարհով: ՀՀ կենտրոնական բանկը Ընկերության համար սահմանում և վերահսկում է կապիտալի պահանջները: Ըստ ՀՀ ԿԲ կողմից սահմանված ներկայումս գործող կապիտալի պահանջների, ունիվերսալ վարկային կազմակերպությունները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն ընդհանուր կապիտալ (2024թ. դեկտեմբերի 31-ին՝ 150,000 հազար ՀՀ դրամ): 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն Կազմակերպության ընդհանուր կապիտալը կազմել է՝ 1,215,403 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ին՝ 1,166,816 հազար ՀՀ դրամ):